ՀՏԴ 94 (479.243) *Պատմություն*

Նորայր Հովսեփյան
Արցախի գիտական կենտրոնի հայցորդ
hnorik@mail.ru
Ղեկավար՝ պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Արամ Հրաչիկի Սիմոնյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արցախը խորհրդայնացվեց Հայաստանից առանձին: Սա զուտ տեխնիկական հարց չէր: Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը լոկալ խնդիր չէր: Այն դիտարկվում էր որպես ավելի մեծ, տարածաշրջանային քաղաքականության բաղկացուցիչ մաս: Իսկ տարածաշրջանում քննարկվող ժամանակահատվածում որոշիչ դեր ունեին ռուս-թուրքական հարաբերությունները: Դրանք բավական բարդ էին: Արցախում եւ Արցախի շուրջ իրադարձություններն էլ ապացուցում են, որ անգամ այդ ժամանակահատվածում Ռուսաստանն ու Թուրքիան միմյանց հանդեպ շատ մեծ վստահություն չունեին: Պատրաստ լուծում չկար նաեւ Արցախյան խնդրի համար: Խորհրդայնացման յուրահատկությունները որոշիչ դեր ունեցան Արցախի հետագա ճակատագրում:

*Բանալի բառեր-**Լեռնային Ղարաբաղ, Ռուսաստան, Թուրքիա, խորհրդայնացում, 11-րդ կարմիր բանակ***

Норайр Овсепян
научный центр Арцаха

СОВЕТИЗАЦИЯ НАГОРНОГО КАРАБАХА И ЕГО ПОСЛЕДСТВИЯ

Арцах был советизирован отдельно от Армении. Это был вопрос не чисто технический. Советизация Нагорного Карабаха не была локальной задачей. Она рассматривалась как более обширная, составляющая часть региональной политики. А в регионе в обсуждаемый период решающими были русско-турецкие отношения. Они были достаточно сложными. События в Арцахе и вокруг Арцаха доказывают, что даже в этот период Россия и Турция не питали большого доверия друг к другу. Не было готового решения и для Арцахкого вопроса. Особенности советизации сыграли решающую роль в дальнейшей судьбе Арцаха.

Ключевые слова: *Нагорный Карабах, Россия, Турция, советизация, 11-ая красная армия.*

Norayr Hovsepyan:
Scientific Center of Artsakh

SOVIETIZATION OF NAGORNO-KARABAKH AND ITS CONSEQUENCES

Artsakh was sovietized seperately from Armenia. It was not a mere technical issue. Sovietization of Nagorno-Karabakh was not a local issue. It was viewed as a constituent part of a larger regional policy. In the discussed period the Russian-Turkish relations played a decisive role in the region. They were rather complicated. The events taking place in and around Artsakh proved that even at that time Russia and Turkey did not have much confidence in each other. There was no solution for the Artsakh issue as well. The peculiarities of the sovietization played a decisive role in the future destiny of Artsakh.

Keywords*: Nagorno Karabakh, Russia, Turkey, sovietization, 11th Red Army*

1920թ. մարտ-մայիսը դրամատիկ իրադարձություններով էր հագեցած հայության արցախյան հատվածի համար: Շուշիի հայության կոտորածը, ապա նաեւ՝ Արցախի այլ տարածքներում Բաքվի թելադրանքով մուսուլման բնակչության կողմից բախումներ սկսելը, արցախահայությանը մի

ավելորդ անգամ եւս համոզեցին, որ չկա այլընտրանք: Արցախահայությունը եւս մեկ անգամ ոտքի ելավ ապրելու իր իրավունքը զենքով պաշտպանելու համար: Ոմանք դա անվանում են Արցախի ապստամբություն: Անկախ պատմագրության մեջ առկա բոլոր թեր եւ դեմ կարծիքներից՝ անժխտելի է, որ հենց դրա շնորհիվ կասեցվեցին Ղարաբաղի այլ բնակավայրերում հայերի ջարդերը, որոնք, տրամաբանորեն, պետք է հետեւեին Շուշիի դեպքերին: Սա նաեւ այս դրամատիկ ժամանակահատվածի այն եզակի պահերից էր, երբ Հայաստանի Հանրապետությունը գործնական քայլեր էր ձեռնարկում՝ իր անմիջական մասնակցությամբ Ղարաբաղում իրավիճակը կարգավորելու ուղղությամբ: Ապրիլի կեսերին Զանգեզուրից Վարանդա մտան Դրաստամատ Կանայանի զորախմբերը: Տարբեր աղբյուրներ տարբեր օրեր են նշում Դրոյի՝ Ղարաբաղ մուտքը, տարբեր կարծիքներ կան անգամ այն մասին, թե որ բնակավայրը որպես կենտրոնատեղի ընտրեց Դրոն: Միանշանակ է այն, որ մի քանի օրվա ընթացքում Արցախի տարածքը ազատագրվեց, իսկ Շուշին, որտեղ պատսպարվել էր Խոսրով բեկ Սուլթանովը, փաստացի հայտնվել էր շրջափակման մեջ[1]: Ձեռնարկված քայլերի արդյունքները չուշացան: Ղարաբաղում գործող տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ ձեւավորվեց Ղարաբաղի կառավարությունը[2]: Ապրիլի 23-ին Թաղավարդ գյուղում կայացավ Ժամանակավոր կառավարության առաջին նիստը, որտեղ հստակ ներկայացվեց Ղարաբաղի կողմնորոշման հարցը, ըստ որի՝ այն «երբեք, ոչ մի պայմանով, հնարավոր չի համարում գտնվել Ադրբեջանի սահմաններում: Նա պետք է միանա ընդհանուր հայությանը՝ կազմելով Հայաստանի Հանրապետության անբաժան մասը»[3]: Այս մոտեցումներն ամրագրվում են ապրիլի 25-29-ը Թաղավարդում կայացած արցախահայության 9-րդ համագումարում, որտեղ պարզ եւ հստակ ձեւակերպվեց՝ հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս[4]:

Թվում էր՝ հասել է վերջապես Արցախի հարցը վերջնական եւ արդարացի լուծելու պահը, սակայն տարածաշրջանում կատարված փոփոխությունները բոլորովին այլ ուղղությամբ տարան դեպքերի զարգացումը: 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացվեց: Այդ փաստով տարածաշրջանում աշխարհաքաղաքական խաղի մեջ ներգրավվեցին նոր եւ ազդեցիկ մասնակիցներ՝ ի դեմս Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի: Նոր իրավիճակում հայ ժողովրդի, մասնավորապես, նրա արցախյան հատվածի ճակատագիրն էապես կախված էր այս երկու նոր խաղացողների փոխհարաբերություններից:

Ռուսաստանը եւ Թուրքիան, որ պատմության ընթացքում ավելի հաճախ հանդես էին գալիս որպես հակառակորդներ եւ դրա համար ունեին առավել քան հիմնավոր պատճառներ[5], քննարկվող կարճ ժամանակահատվածում դաշնակցելու փոխադարձ կամեցողություն ցուցաբերեցին: Ընդ որում՝ Թուրքիան Ռուսաստանի հետ իր այդ «բարեկամությունն» ու իր արեւելյան սահմանների հարցը դիտարկում էր ոչ այլ կերպ, քան Բրեստ-Լիտովսկի հայտնի պայմանագրի տրամաբանությամբ[6], ինչը, բնականաբար, արդեն իսկ իրական սպառնալիք էր պարունակում հայկական կողմի համար: Եվս մեկ հետաքրքիր մանրամասն: Անգամ այն ժամանակ գաղտնիք չէր, որ Թուրքիայի մտահղացմամբ Անդրկովկասում Ադրբեջան անունով պետության ստեղծման նպատակներից մեկն այստեղ ռուսական ազդեցության տարածմանը խոչընդոտելն էր[7]: Խորհրդայնացման փաստով, ըստ էության, վերացվեց Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը: Ստեղծելով նոր, արդեն խորհրդային պետություն՝ Խորհրդային Ռուսաստանը շարունակեց նրա անվան մեջ պահպանել «Ադրբեջան» անունը: Ռուսաստանը, փաստորեն, սեփականացրեց Մեծ Ադրբեջան ստեղծելու թուրքական գաղափարը: Բնականաբար, նրանցից յուրաքանչյուրը դրա համար ուներ իր դրդապատճառները. եթե Թուրքիան, անկախ

[1] ՀՀՊՊԿԱ ֆ. 314, ց. 1, գ. 34, թթ. 270-274

[2] Տես, Հարությունյան Հ. Մ., Լեռնային Ղարաբաղը 1918-1923թթ., ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1996, էջ 230, Нагорный Карабах в 1918-1923гг., Изд. АНА РА, отв. редактор В. М. Микаелян, Ереван,1992, стр. 425-426

[3] Հարությունյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 232

[4] Տես Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երեւան, 1991, էջ 98

[5] Տես Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Երեւան, 1999, էջ 83

[6] Տես Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1920թթ., Երեւան, 2002, էջ 127

[7] Տես Գալոյան Գ., Հայաստանը եւ մեծ տերությունները 1917-1923թթ., Երեւան, 1999, էջ 252

նրանից՝ ինչ պիտակ է կրում տվյալ պահին, Մեծ Ադրբեջանի ստեղծումը համարում էր պանթուրքական «ազգային իդեալների» իրականացմանն ուղղված եւս մեկ քայլ, ապա Խորհրդային Ռուսաստանը Մեծ Ադրբեջանը համարում էր հեղափոխությունն Արեւելք «արտահանելու» ցատկահարթակ: Բնականաբար, երկու դեպքում էլ տուժելու էին Ադրբեջանի հարեւանները, առաջին հերթին՝ Հայաստանը եւ Իրանը. ի վերջո, Մեծ Ադրբեջանը պետք է ստեղծվեր ի հաշիվ հարեւան երկրների տարածքների: Երկար սպասելու հարկ չեղավ: Ադրբեջանի խորհրդայնացման օրը, 1920թ. ապրիլի 28-ին, Սուլթանովն էլ իր հերթին հայտարարեց Արցախում խորհրդային կարգեր հաստատելու մասին: Հեղկոմներ ստեղծվեցին Շուշիում, Կարյագինոյում եւ այլ բնակավայրերում, իսկ ապրիլի 29-ին ստեղծվեց Ղարաբաղի Միացյալ հեղկոմը, որի նախագահ հռչակվեց Խոսրով բեկ Սուլթանովը[1]:

Այլ կերպ ասած՝ Խորհրդային Ադրբեջանի հռչակման փաստով հայկական մի շարք տարածքների կորուստն արդեն իսկ կանխորոշված էր: Ընդ որում՝ այս պարագայում հայ ժողովուրդը դեպքերի զարգացման վրա որեւէ կերպ ազդելու գրեթե ոչ մի հնարավորություն չուներ: Բավական է միայն նշել, որ հենց թուրքական կողմն էր իր օգնությունն առաջարկել «իմպերալիստական» Հայաստանի դեմ պայքարելու համար, բայց Ռուսաստանը չէր ընդունել այդ առաջարկը[2]: Այդ մասին բավական պարզ ու հստակ նշված է Մ. Քեմալի՝ Լենինին ուղարկված 1920թ ապրիլի 26-ի նամակում[3]: Դեռ ավելին՝ հենց նույն Խորհրդային Ռուսաստանի միջամտության արդյունքում Թուրքիան 1920թ. ամռանը դադարեցրեց Հայաստանի Հանրապետության դեմ արշավանքի նախապատրաստությունները[4]: Այս փաստն ավելի ուշ ընդգծում է նաեւ ՌՍՖՍՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը՝ ՀՀ վարչապետ Համո Օհանջանյանին ուղղված հեռագրում:

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարներին, ըստ երեւույթին, խորթ չէր նոր անվան տակ նախկին ռուսական կայսրության տարածքները միավորելու գաղափարը: Այս պարագայում, երբ Ռուսաստանը բավական լուրջ խնդիրներ ուներ Արեւմտյան ճակատում եւ ներքին, հակաբոլշեւիկյանուժերի դեմ պայքարում եւ չէր կարող հարկ եղած ուշադրությունն ու ուժերը կենտրոնացնել Կովկասում, կողմնակից չէր այստեղ լայնամասշտաբ գործողությունների ծավալմանը: Իսկ Հայաստանի խորհրդայնացումը թուրքական ուժերի օգնությամբ՝ անկանխատեսելի հետեւանքներով էր հղի, ինչին Մոսկվան չհամաձայնեց: Եվ Հայաստանի խորհրդայնացումը հետաձգվեց:

Ղարաբաղի խորհրդայնացման հարցում ամեն ինչ ավելի բարդ էր: Նախ, ե՞րբ է, վերջապես, խորհրդայնացվել Ղարաբաղը: Ապրիլի 28-29-ի՞ն, երբ Սուլթանովը խորհրդային կարգերին իր հպատակությունը հայտնեց, մայիսի երկրորդ կեսի՞ն, երբ Դրոն ու Նժդեհը, իշխանությունը տեղի հայ բոլշեւիկներին հանձնելով, հեռացան Ղարաբաղից, թե՞ մայիսի 28-ին, երբ Ադրբեջանից բոլորովին անկախ եւ ամբողջովին այլ հանգամանքներում արցախահայության 10-րդ համագումարը Ղարաբաղը հռչակեց խորհրդային: Ընդ որում, Ղարաբաղի՝ հայկական տարածք լինելու եւ տվյալ պահին էլ հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվելու փաստն իրենց փոխադարձ գրագրություններում հաստատում էին նաեւ Խորհրդային Ռուսաստանի գործիչները: Ինչ վերաբերում է խորհրդայնացման ժամկետներին, ապա դե-յուրե առավել ընդունելի է 1920թ. մայիսի 28-ը, երբ Ղարաբաղի խորհրդայնացման փաստը ամրագրեց ղարաբաղի հայության 10-րդ համագումարը՝ ներկայացուցչական մի մարմին, որն իրավմամբ իրավասու էր նման կարեւոր որոշումներ կայացնել: Իսկ դե-ֆակտո դա եղել էր ավելի վաղ, երբ Դրոն Ղարաբաղում իշխանությունը հանձնեց տեղի հայ բոլշեւիկներին եւ հեռացավ: Ընդ որում՝ միմյանցից բոլորովին անկախ եւ մինչեւ իսկ հակոտնյա բազմաթիվ աղբյուրներ հաստատում են, որ այդ որոշումը, ըստ էության, չէր հակասում Ղարաբաղի հայության կամքին:

---

[1] ՀՀՊՊԿԱ, ֆ.200, ց.1, գ. 581, թ.57

[2] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., Քաղաքական պատմություն. փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երեւան, 2000, էջ 206-207

[3] Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թ., Երեւան, 2002, էջ 14-15

[4] Զոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը եւ հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922թթ., Երեւան, 1979, էջ 43

Հարցերի մեկ այլ խումբ անդրադառնում է Ղարաբաղի խորհրդայնացման, այսպես ասած, անխուսափելիությանը: Անվիճելի է, որ Խորհրդային Ռուսաստանն այդ պահին գերադասում էր ձեռնպահ մնալ Անդրկովկասում նոր տարածքներ խորհրդայնացնելու հեռանկարից եւ դրա համար ուներ բազմաթիվ պատճառներ: Ադրբեջանի խորհրդայնացուրմից շատ չանցած՝ նույն Ռուսաստանը բանակցություններ է սկսում Հայաստանի եւ Վրաստանի ոչ խորհրդային կառավարությունների հետ: Դեռ ավելին, անգամ Հայաստանում բոլշեւիկների մայիսյան ապստամբության պահին Խորհրդային Ռուսաստանը ձեռնպահ մնաց ՀՀ-ի դեմ ուղղակի քայլերից[1], չնայած այդ առթիվ հնչած առաջարկներին, եւ գերադասեց բավարարվել պարզապես ՀՀ կառավարությանը նոտաներ հղելով: Իսկ Հայաստանի տարածքները մտած ռուսական ուժերը ետ քաշվեցին: Վերը նշվածը ինքնին հուշում է, որ Խորհրդային Ռուսաստանն այդ պահին Կովկասում խոշորամասշտաբ գործողությունների չէր ձգտում: Առավել եւս, անցանկալի էր համարում այդ գործողություններում Թուրքիայի ներգրավումը:

Եվ հանկարծ նման պարագայում խորհրդայնացվում է բնիկի հայկական մի մեծ տարածք՝ Լեռնային Ղարաբաղը: Դա անսպասելի, առավել եւս՝ պատահական երեւույթ չէր: Խորհրդային Ռուսաստանին ուղղակի կապ էր անհրաժեշտ Քեմալի հետ, եւ դրա ամենակարճ տարբերակներից ցանկացածն անցնում էր հայկական տարածքների վրայով: Որ անհետաձգելի հռչակված քեմալաբոլշեւիկյան «կամուրջն» ամենայն հավանականությամբ պետք է անցներ հենց հայկական տարածքներով՝ գաղտնիք չէր նաեւ Հայաստանի ղեկավարության համար: Ավելի հստակ. Ադրբեջանի խորհրդայնացման հաջորդ օրը, ապրիլի 29-ին, Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը հաղորդագրություն է ուղարկում ՀՀ արտգործնախարարությանը, որ Կարմիր Բանակն ու քեմալականներն ամենայն հավանականությամբ միմյանց հետ կապ կհաստատեն Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջեւան գոտու վրայով[2]: Արդեն մայիսի 11-ին՝ Կովկասյան ճակատի հրամանատարությունը 11-րդ Կարմիր բանակին հրաման է տալիս «ազգամիջյան բախումներ թույլ չտալու նպատակով» իր հսկողության տակ առնել Նախիջեւան-Օրդուբադ-Շուշի գոտին՝ մինչեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանային հարցերի վերջնական ճշգրտումը[3]: Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի 281-րդ գունդը[4]: Մայիսի 12-ին Շուշի եկավ նաեւ Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի նախագահ Գ. Օրջոնիկիձեն: Սուլթանովն ու նրա զինակիցները ձերբակալվեցին[5]: Շատ չանցած՝ երեւան է գալիս նաեւ դրա դիվանագիտական հիմնավորումը. մայիսի 28-ին ՌՍՖՍՀ ղեկավարությանն ուղղված իր հեռագրում արտգործշողկոմ Չիչերինը տեղեկացնում է, թե ՀՀ-ի հետ կայանալիք բանակցություններում պահանջելու է ռուսական զորքերի կողմից ՀՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ վիճելի տարածքների զբաղեցումը: Միաժամանակ նա մտահոգություն է հայտնում, թե բավարար ուժերի բացակայության պարագայում անհնար կլինի նման պահանջներ առաջ քաշել[6]: Մեկ օր անց, մայիսի 29-ին, նույն հասցեով Չիչերինի կողմից ուղարկված գաղտնի գրության մեջ հակամարտող ազգությունների միջեւ հաշտարարի դերի ստանձման մարդասիրական դերից բացի արտգործժողկոմը նշված տարածքների՝ ռուսական զորքերի կողմից գրավման անհրաժեշտությունը հիմնավորում է եւս մեկ ռեալ ու էական փաստով. «Դրանց զբաղեցումը մեզ թուրք ազգայնականների եւ Պարսկաստանի հետ ուղղակի կապի հնարավորություն կտա»[7]: Եվ թող պատրանք չստեղծվի, թե դա Չիչերինի գյուտն էր. վերը նշված գրությանն ի պատասխան՝ մայիսի 31-ին նրան վստահեցնում են, որ հենց նույն նպատակով դեռ մայիսի 11-ին Կովկասյան հրամանատարությունը 11-րդ բանակին հրաման էր տվել իր հսկողության տակ առնել նշված

[1] Нагорный Карабах в международном праве и мировой политике, Документы и материалы, Том 1, отв. ред. Ю. Барсгов, Москва, Кругь, 2008, стр. 437

[2] Нагорный Карабах в 1918-1923гг., Изд. АНА РА, отв. редактор В. М. Микаелян, Ереван,1992, стр. 442

[3] Нагорный Карабах в международном праве и мировой политике, Документы и материалы, Том 1, отв. ред. Ю. Барсгов, Москва, Кругь, 2008, стр. 437

[4] Հարությունյան Հ. Մ., Լեռնային Ղարաբաղը 1918-1920թթ., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, Երեւան, 300 էջ., Երեւան, 1996թ., էջ 237-238

[5] Ժողովուրդ, 15 հունիսի 1920թ.

[6] Нагорный Карабах в международном праве и мировой политике, Документы и материалы, Том 1, стр. 442-443

[7] Нагорный Карабах в международном праве и мировой политике, Документы и материалы, Том 1, стр. 443

շրջանները[1]: Այլ կերպ ասած, Ղարաբաղի հարցը այդ ժամանակաշրջանում արդեն իսկ դիտարկվում էր ոչ թե որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տարածքային վեճ, այլ տարածաշրջանային մեծ խաղի կարեւոր բաղադրիչ: Եվ այդ համատեքստում գերխնդիրը այդ տարածքի նկատմամբ ռուսական վերահսկողությունը հաստատելն էր: Հենց այդ հիմնավորումներով Մոսկվայի քաղաքական օրակարգ մտավ Ղարաբաղը խորհրդայնացնելու անհրաժեշտությունը, այն ժամանակ, երբ Հայաստանի խորհրդայնացման հարցում դեռ հապաղում էր ուղղակի քայլեր կատարել: Իսկ ի՞նչ էր կատարվում այդ պահին բուն Ղարաբաղում: Ադրբեջանի խորհրդայնացման հենց հաջորդ օրը «Ղարաբաղի գեներալ-նահանգապետ» Սուլթանովը մի գիշերվա մեջ դարձավ բոլշեւիկ՝ իր ավազակախումբը հռչակելով Ղարաբաղի Հեղկոմ, իսկ իրեն՝ Հեղկոմի նախագահ[2]: Դա բողոքի ալիք բարձրացրեց արցախահայության շրջանում: Մայիսի սկզբներին այդ առթիվ բողոքի մի նամակ ուղարկվեց Լենինին. «Ղարաբաղի 360 հազարանոց հայությունը երեք տարի պայքարել է խանաբեկական Ադրբեջանի եւ Թուրքիայի դեմ: Եվ կրկնակի եռանդով կշարունակի պայքարը, մինչեւ Ղարաբաղի սահմաններին կմոտենան հեղափոխությանը հավատարիմ Խորհրդային Ռուսաստանի զավակները»[3]: Այստեղ հստակ ուրվագծվում է մի նոր նրբություն. ռուսական զորքերի հնարավոր մուտքը եթե ոչ բարեկամաբար, ապա բավական հանգիստ էր ընդունվելու Ղարաբաղի հայության կողմից: Եվս մեկ հանգամանք. փաստերը վկայում են, որ ոչ միայն տեղի հայ բոլշեւիկները, այլեւ Ղարաբաղի հայության մեծ մասը բարյացակամորեն կամ, համենայնդեպս, հանդուրժողաբար էր վերաբերվում Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման հեռանկարին[4]: Դա խոստովանել է նաեւ Դրաստամատ Կանայանը՝ 1920թ. մայիսի 21-ին ՀՀ կառավարությանն ուղղված իր հեռագրում. «Հայ գյուղացիների միջոցով անհնար է դիմադրել բոլշեւիկներին»[5]: Վերը նշվածն, անշուշտ, չի նշանակում, թե Ղարաբաղը բացարձակ ռուսական հակում ուներ եւ պարզապես հարմար առիթն օգտագործեց՝արդեն բացահայտ դրսեւորելով իր կողմնորոշումը: Ղարաբաղը, պարզապես, ընտրության մեծ հնարավորություն չուներ: Իսկ արցախահայության վերը նշված կողմնորոշումը դեպի խորհրդային կարգերը ավելի ճիշտ կլինի դիտարկել ոչ թե որպես ռուսամետություն կամ հակաարեւմտականություն, այլ ընդամենը որպես թուրք-ադրբեջանական վտանգից, ասել է թե՝ ցեղասպանության միանգամայն իրական հեռանկարից գոնե այս կամ այն չափով ապահովագրում: Արդյունքում՝ 1920թ. մայիսի 28-ին, Ադրբեջանի խորհրդայնացումից մեկ ամիս անց, Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը Ղարաբաղը հռչակեց խորհրդային:

Էլի մի մանրամասն. ՀՀ-ն եւս, ըստ էության, Ղարաբաղի, այսպես ասած, կամավոր խորհրդայնացումը ստեղծված իրավիճակում լավագույն ելքն էր համարում կամ գոնե՝ չարյաց փոքրագույնը: Բավական է նշել, որ ՀՀ-ում բոլշեւիկյան խռովությունը հաջողությամբ ճնշած կառավարության ներկայացուցիչը՝ Դրաստամատ Կանայանը, Ղարաբաղում ոչ միայն համագործակցում էր տեղի հայ բոլշեւիկների հետ, այլեւ այդտեղից հեռանալիս մայիսի կեսերին իշխանությունը հանձնեց հայ բոլշեւիկներին՝ նրանց թողնելով նաեւ կապի միջոցներ, զենք-զինամթերքի զգալի պաշարներ[6]: Հետքրքիրն այն է, որ խաղաղ խորհրդայնացման նման տարբերակի դեպքում Թուրքիան եւս Խորհրդային Ռուսաստանից բացահայտ դժգոհելու առիթ չուներ. Ռուսաստանը պարզապես կատարում էր բարի դաշնակցի իր պարտավորությունները (ուղղակի կապ էր ապահովում Թուրքիայի հետ)՝ միաժամանակ առիթ չստեղծելով այդ տարածքում նրա ակտիվ ներգրավման համար:

Սակայն դեպքերի նման զարգացումը բոլորովին էլ չէր համապատասխանում ադրբեջանաթուրքական ծրագրերին. Ղարաբաղի խաղաղ խորհրդայնացման պարագայում փաստորեն այլեւս առիթ չկար, որ «կարմիր» Ադրբեջանի զորքերը մտնեին Ղարաբաղ: Սակայն առիթը ստեղծվեց. զարմանալի զուգադիպությամբ հենց այդ պահին Ադրբեջանի տարբեր մասերում

[1] Нагорный Карабах в международном праве и мировой политике, Документы и материалы, Том 1, стр. 444
[2] Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Երեւան, 1994, էջ 91
[3] Нагорный Карабах в 1918-1923гг., Изд. АНА РА, отв. редактор В. М. Микаелян, Ереван,1992, стр. 457
[4] Տես Հովհաննիսյան Գ. Ա., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երեւան, 1971, էջ 162-165
[5] Տես Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 100
[6] Տես Հարությունյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 247

սկսվեցին հակախորհրդային խռովություններ: Դրանցից անմասն չմնացին նաեւ Ղարաբաղի մահմեդականները[1]: Վերը նշված շարժումների թվում աչքի էր ընկնում առանձնապես Նուրի փաշայի ապստամբությունը եւ նրա կողմից Գանձակի գրավումը: Այս գործողությունների ընթացքում բոլշեւիկները մեծաթիվ զոհեր տվեցին: Խռովարարների դեմ հանվեցին Կարմիր Բանակի զորամիավորումները, որոնց շարքերում զգալի թիվ էին կազմում նաեւ նախկին ադրբեջանական բանակի ասկյարները: Նահանջող Նուրի փաշայի հետքերով այդ զորքերը մտան Աղդամ, ապա շարժվեցին դեպի Շուշի: Այս խռովությունների ղեկավար Նուրի փաշան եւ նրա համախոհները հետագայում մնացին անպատիժ, իսկ Շուշիում հակախորհրդային խռովություն հրահրող գնդապետ Զեյնալովը Շուշիից կողոպտած իր հարստությունը պահեց հենց ԱդրԽՍՀ բանկերում[2]: Այս եւ այլ հանգամանքներ անուղղակի հաստատում են, որ վերը նշված խռովությունները կազմակերպվել են հենց նույն թուրք-ադրբեջանական կողմի դրդմամբ:

Ղարաբաղի համար այս իրադարձությունների արդյունքը եղավ այն, որ ի թիվս բնիկ հայկական մի շարք տարածքների, հայտնվեց ոչ հայկական ուժերի վերահսկողության տակ: Սա արդեն նոր որակ էր, ինչը փաստաթղթային ձեւակերպում ստացավ մեկ-մեկուկես ամիս անց՝ 1920թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրի շրջանակներում:

[1] Տես Խորհրդային Ղարաբաղ, 27 հունիսի, 1971

[2] Տես Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000թթ., Մաս առաջին, Երեւան, 2003, էջ 324